ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 09/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 10 սեպտեմբերի 2024թ.

Նիստին մասնակցում էին տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի նախագահ Վարդան Սուքիասյանը, հանձնաժողովի քարտուղար՝ Զարուհի Ասրեսյանը, հանձնաժողովի անդամներ՝ Աննա Սահրատյանը, Վրեժ Բեգլարյանը և Գայանե Բարեղամյանը:

**Օրակարգում՝**

**Օրակարգում՝**

Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 12-ի N 79-Ն որոշման՝ արտադպրոցական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում (ԱՈՒՀ ՀՈԱԿ) մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի նվազեցման արտոնությունից օգտվելու համար Բյուրեղավան համայնքի ղեկավարին դիմած՝ «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ հաճախող երեխաների ծնողից ստացված դիմումի մասին:

Հանձնաժողովի քարտուղար Զարուհի Ասրեսյանը հանձնաժողովին ներկայացրեց, որ տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնությունից օգտվելու համար ներկայացված դիմումին կից ներկայացվել է արտոնության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը: Նա հանձնաժողովի քննարկմանը ներկայացրեց լրացված արտոնության տրամադրման ամփոփաթերթիկը:

Քննարկումից պարզ դարձավ, որ ներկայացված դիմումը «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ-ի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 50%-ի չափով նվազեցման արտոնությունից օգտվելու հիմքով է.

- **«Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ-ի համար դիմել է.**

1) *կազմակերպություն հաճախող միևնույն ընտանիքի երեխաներ՝*

Դիմել է՝

1.Աննա Աղբեւայանը (Մարիա, Ալեքս և Մոնթե Ղազարյանների ծնողը), ք. Բյուրեղավան, Երիտասարդական փող., շ. 23, բն. 2:

**Հանձնաժողովը որոշեց՝**

Առաջարկություն ներկայացնել Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝

1.Մարիա, Ալեքս և Մոնթե Ղազարյանների վերաբերյալ «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ-ում մատուցված ծառայություններից օգտվելու համար փոխհատուցման գումարի 50%-ի չափով նվազեցման արտոնություն կիրառելու որոշում կայացնելու համար:

Հանձնաժողովի նախագահ ՝ ______________________ Վ. Սուքիասյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ______________________ Ջ. Ապրեսյան

Հանձնաժողովի անդամներ՝ ______________________ Ա. Սահրադյան

______________________ Վ. Բեգլարյան

______________________ Գ. Բարեղամյան